ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 30 -ին, N 294
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶՆԻՎ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Ա. Պետրոսյանի 2021 թվականի օգոստոսի 30-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի օգոստոսի 30-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Գր.Ղափանցյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավոր դնել ուսումնական գծով փոխտնօրեն Ազնիվ Պետրոսյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 27 -ին, N 293
ք. Աշտարակ

ԱՍՏՂԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

2021 թվականի օգոստոսի 30-ից Աստղիկ Մկրտչյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Գր.Ղափանցյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016 թվականի օգոստոսի 29-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. օգոստոսի 26 N 292

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 318 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի 5.1.1 կետը.

Որոշում եմ՝

1.2021 թվականի հոկտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի ղեկավարությամբ, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով:

2.Նշանակել՝

1) հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալին,

2) հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետին,

3. Ստեղծել հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով.

1) խաղարկման խումբ՝ խմբի ղեկավար, Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետին,

2) վերլուծության նախապատրաստման խումբ՝ խմբի ղեկավար, Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետին:

4. Հաստատել՝

1) հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված 1–ի,

2) հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված 2–ի:

5.Ուսումնավարժությանը ներգրավվել՝

1) Արագածոտնի մարզպետարանի ղեկավար կազմին,

2) մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին,

3) մարզի տարահանման հանձնաժողովին,

4) մարզային ծառայություններին:

6. Հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) կազմակերպել հրամանատարաշտաբային ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2021թ. սեպտեմբերի 25-ը ներկայացնել իմ հաստատմանը,

2) կազմակերպել հրամանատարաշտաբային ուսումնավարժության ներգրավվող պաշտոնատար անձանց, ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,

3) ապահովել համագործակցությունը հրամանատարաշտաբային ուսումնավարժության մասնակիցների հետ,

1) կազմակերպել մարզի արտակարգ իրավիճակներում գործելու պլանի ճշգրտումը,
2) հրամանատարաշտաբային ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2021 թվականի հոկտեմբերի 10–ը:

7. Հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել հրամանատարաշտաբային ուսումնավարժության գործնական միջոցառումների անցկացման պլանի մշակումը մինչև 2021թ. սեպտեմբերի 25-ը ներկայացնել ուսումնավարժության ղեկավարի տեղակալին,

2) կազմակերպել արձագանքող ուժերի նախապատրաստումը՝ գործնական միջոցառումների ընթացքում անվտանգության կանոնների պահպանումը ապահովվելու համար,

3) գործնական միջոցառումների ընթացքում անվտանգության կանոնների խախտման դեպքում անհապաղ դադարեցնել իրականացվող միջոցառումները:

8. Հրամանատարաշտաբային ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով,

2) պատրաստ լինել զեկուցելու ընթացքում կատարած միջոցառումների մասին,

3) գործնական միջոցառումների իրականացման ժամանակ խստագույնս պահպանել անվտանգության կանոնները.

4) ուսումնասիրել արտակարգ իրավիճակներում գործելու պլանը.

5) ուսումնասիրել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության» մասին ՀՀ օրենքը և այն իրավական ակտերը, որոնցով կարգավորվում է բնակչության պաշտպանությանն ուղված միջոցառումները:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:
10. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

26.08.2021

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2021 թվական N 291

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 45 քաղաքացիների հատկացնել 2 120 000 /երկու միլիոն մեկ հարյուր քսան հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՍՏՋ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 25-ին, N 290
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Արմեն Հակոբյանի 2021 թվականի օգոստոսի 24-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ծաղկահովիտի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արմեն Հակոբյանին տալ ամենամյա արձակուրդ 2018 թվականի ապրիլի 18-ից 2019 թվականի ապրիլի 18-ն ընկած ժամանակահատվածի համար, 20 աշխատանքային օր տևողությամբ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից սեպտեմբերի 29-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ծաղկահովիտի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել բուժական գծով փոխտնօրեն Ջիվան Սանոսյանի վրա:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021 թ. օգոստոսի 24 N 289

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 15.07.2021 թ. թիվ ՀԲ/20.1/17663-2021 գրությունը, **որոշում եմ՝**

1. 2021 թվականի օգոստոսի 26-ից 30-ը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծաձորի համայնքապետարանում իրականացնել իրավական հսկողություն:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված իրավական հսկողության իրականացումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հովհաննես Ասատրյանին, հողաշինության և հողօգտագործման բաժին-ՄՀՊՏ ավագ մասնագետ Գրիգոր Մանուկյանին և քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի մասնագետ Արթուր Ավագյանին:

3. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված իրավական հսկողության շրջանակում պարզել տեղական ինքնակառավարման մարմնի կողմից համայնքի շահերի պատշաճ պաշտպանության վիճակը, քաղաքաշինության բնագավառում իրավախախտման դեպքերը և հողային հարաբերությունների հետ կապված հարցերը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 19-ին, N 288
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, 22-րդ հոդվածի 9-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի հունիս-հուլիս ամիսներին աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակիցներին պարգևատրել՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ ենթակա է վճարման ընդամենը՝ 589699 (հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր իննսունինը) դրամ:

X
ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 17-ին, N 287
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԵՂԻՇԵ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 5-րդ կետով և 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Եղիշե Անտոնյանի 2021 թվականի օգոստոսի 12-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի օգոստոսի 20-ից օգոստոսի 25-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Եղիշե Անտոնյանին տրամադրել չվճարվող արձակուրդ:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Սոֆյա Կիրակոսյանի վրա:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2021 թվական N 286

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 15 քաղաքացիների հատկացնել 530 000 /հինգ հարյուր երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՍՏՋ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 16-ին, N 285
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԳԵՂԱԴԻՐԻ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԲԱՎԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 5-րդ կետով և 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Բ. Գևորգյանի 2021 թվականի օգոստոսի 12-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի օգոստոսի 16-ից օգոստոսի 19-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Գեղադիրի Ռ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Բավական Գևորգյանին տրամադրել չվճարվող արձակուրդ:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Գեղադիրի Ռ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել փոխտնօրեն Արաքսի Ղարիբյանի վրա:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. օգոստոսի 16 **N** 284

ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 318 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի 5.3.1 կետը և Արագածոտնի մարզպետի 2021 թվականի օգոստոսի 11–ի թիվ 279 որոշմամբ, Արագածոտնի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 9–ի թիվ 318 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլան»–ի 5.3.1 կետում կատարված փոփոխությունները.

Որոշում եմ՝

1. 2021 թվականի սեպտեմբերի 15-ին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի միջնակարգ դպրոցում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն <<Փրկարարական և որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում ավերիչ երկրաշարժի ժամանակ>> թեմայով:

2. Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը ընդգրկել՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչությանը, Արագածի հրշեջ փրկարարական ջոկատի անձնակազմին, ոստիկանության Արագածի բաժնից 1 պարեկային խումբ, ճանապարհային ոստիկանության 1 հաշվարկ, <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի շտապ բուժօգնության ծառայության գծային 1 բրիգադ, <<ՀԷՑ>> ՓԲԸ Մուսալեռ մասնաճյուղի Արագածի

շրջանային էլեկտրոցանցից 1 վթարային խումբ և <<Գազպրոմ Արմենիա>> Արագածոտնի մասնաճյուղի Արագածի տեղամասից 1 վթարային խումբ:

3. Սահմանել որ՝

1) Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավար հանդիսանում է << Արագածոտնի մարզպետը,

2) Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ << Արագածոտնի մարզպետի տեղակալը,

3) Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետը:

4. Հաստատել՝

1) Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի,

2) Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանը՝ համաձայն հավելված 2-ի:

5. Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2021թ. օգոստոսի 25-ը ներկայացնել հաստատման,

2) կազմակերպել ուսումնավարժության ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2021 թվականի օգոստոսի 30-ը:

6. Գործնական միջոցառումների խմբի ղեկավարին՝

1) ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ,

2) ապահովել գործնական միջոցառումների ընթացքում անվտանգության կանոնների պահպանումը,

3) անվտանգության կանոնների խախտման դեպքում անհապաղ դադարեցնել իրականացվող միջոցառումները:

7. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով,

2) գործնական միջոցառումների ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները,

3) պատրաստ լինել զեկուցելու ընթացքում կատարած միջոցառումների մասին:

9.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ուսումնավարժության ղեկավարի տեղակալի վրա:

10. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2021 թվական N 283

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 15 քաղաքացիների հատկացնել 490 000 /չորս հարյուր իննսուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՍՏՋ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2021 թվական N 281

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 12 քաղաքացիների հատկացնել 710 000 /յոթ հարյուր տասը հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՍՏՋ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 11-ին, N 280
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՂԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Հ. Հարությունյանի 2021 թվականի օգոստոսի 11-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի օգոստոսի 11-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արագածոտնի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել դպրոցի փոխտնօրեն Հեղինե Հարությունյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. օգոստոսի 11 N 279

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 318 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 9–ի թիվ 318 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլան»–ի 5.3.1 կետի 2–րդ սյունակում «Ապարանի նախկին կուլտուրայի տանը» բառակապակցությունը փոխարինել «Ծաղկահովիտի միջնակարգ դպրոց» բառակապակցությամբ, իսկ 6–րդ սյունակում՝ «Ապարանի ՀՓՋ-երկու մարտական հաշվարկ», «Ոստիկանության Ապարանի բաժին», «Ապարանի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի շտապ բուժօգնության ծառայության գծային բրիգադ», «ՀԷՑ» ՓԲԸ Մուսալեռ մասնաճյուղի Ապարանի մասնաճյուղ» և «Գազպրոմ Արմենիա Ապարանի մասնաճյուղ» բառակապակցությունները փոխարինել «Արագածի ՀՓՋ-երկու մարտական հաշվարկ», «Ոստիկանության Արագածի բաժին», «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի շտապ բուժօգնության ծառայության գծային բրիգադ», «ՀԷՑ» ՓԲԸ Մուսալեռ մասնաճյուղի Արագածի մասնաճյուղ» և «Գազպրոմ Արմենիա Արագածի մասնաճյուղ» բառակապակցություններով:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 10-ին, N 278
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ԵԴԵՍԻԱՅԻ Ն.ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՏՅՈՄ ԱԶԱՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և ՀՀ Արագածոտնի մարզի «Նոր Եդեսիայի Ն.Շնորհալու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Ա. Ազատյանի 2021 թվականի օգոստոսի 9-ի դիմումը. ***որոշում եմ***՝

1. «Նոր Եդեսիայի Ն.Շնորհալու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Արտյոմ Ազատյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2020-2021 թվականների ուսումնական տարվա համար 16 աշխատանքային օր տևողությամբ՝ 2021 թվականի օգոստոսի 10-ից օգոստոսի 31-ը ներառյալ:
2. Արտյոմ Ազատյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Նոր Եդեսիայի Ն.Շնորհալու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Նոր Եդեսիայի Ն.Շնորհալու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Արմինե Գասպարյանի վրա:
3. Արտյոմ Ազատյանին աշխատանքի մեջ համարել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ օգոստոսի 6 N 276

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2. կետի պահանջով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

2021 թվականի հոկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի հերթական ընտրություն:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 5 -ին, N 275
ք. Աշտարակ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ և 9-րդ մասերով, 9-րդ հոդվածի 10-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի օգոստոսի 6-ից Մարգարիտա Բնյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդականի պաշտոնում:

Հիմք՝ Մ. Բնյանի 2021 թվականի օգոստոսի 5-ի դիմումը:

2. Աշխատավարձը՝ <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 3 -ին, N 274
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՎԱՆԻ ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՍԵՓ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ավանի Աղբյուր Սերոբի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հ. Դավթյանի 2021 թվականի օգոստոսի 2-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. <<Ավանի Աղբյուր Սերոբի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հովսեփ Դավթյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը 2020-2021 թվականների ուսումնական տարվա համար 16 աշխատանքային օր տևողությամբ՝ 2021 թվականի օգոստոսի 6-ից օգոստոսի 27-ը ներառյալ:
2. Հովսեփ Դավթյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Ավանի Աղբյուր Սերոբի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել <<Ավանի Աղբյուր Սերոբի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության փոխտնօրեն Աշոտ Մուշեղյանի վրա:
3. Հովսեփ Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2021 թվականի օգոստոսի 30-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. օգոստոսի 3 -ին, N 273
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻԳՐԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածի դրույթներով, <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասով և հիմք ընդունելով Տ. Եղիազարյանի 2021 թվականի օգոստոսի 2-ի դիմումը՝ ***որոշում եմ***.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Տիգրան Եղիազարյանին տրամադրել իր ամենամյա նվազագույն արձակուրդի մասը և լրացուցիչ արձակուրդը՝ 2020 թվականի նոյեմբերի 3-ից 2021 թվականի նոյեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 13 աշխատանքային օր տևողությամբ 2021 թվականի օգոստոսի 9-ից օգոստոսի 25 -ը ներառյալ:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 272 03 օգոստոսի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի «իբ»-«իդ» կետերով, հաշվի առնելով «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 23 հուլիսի 2021 թվականի և 27 հուլիսի 2021 թվականի գրությունները, որոշում եմ.

1. Հաստատել՝
   «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021թվականի՝

1.1. եկամուտների և ծախսերի նախահաշիվը համաձայն N1 հավելվածի

1.2. հաստիքացուցակը՝ համաձայն N2 հավելվածի

1.3. վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների, հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակների ու սակագների ցուցակը համաձայն N3 հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից սկսած իրավահարաբերությունների վրա:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ